

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ՄԻՔԱՅԵԼ ՄԻԱՆՍԱՐՅԱՆՑԻ ԴԵՐԸ ՀԱՅ ԲԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՍԿԶԵՆԱԿՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Ս. Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հայ բանագիտության սկզբնավորման, ծնավորման գործում իր որոշակի ներդրումն ունի 19-րդ դարի 2-րդ կեսի հայ մշակութային, հասարակական գործիչ Միքայել Միանսարյանը:

Հայ ժողովրդական բանահյուսության նկատմամբ անցյալի մշակութաբանների, այդ թվում և՛ Միք. Միանսարյանցի հետաքրքրությունները պայմանավորված են Հին Հայաստանի պատմաքաղաքական, հասարակական ու մշակութային կյանքում տեղի ունեցող որոշակի տեղաշարժերով: 19-րդ դարի 50-60-ական թվականներից սկսած հայ ժողովրդի պատմության և հին մշակույթի խնդիրները դառնում են հայ անվանի մտավորականներ Մ. Էմինի, Հ. Գաթրճյանի, Ստ. Պալասանյանի և այլոց մտահոգության գլխավոր առարկան: Քննական յուրատիպ մոտեցումներով ու վերլուծություններով նրանք ձեռնամուխ են լինում հայ միջնադարյան պատմիչներ Ազաթանգեղոսի, Մ. Խորենացու, Փ. Բուզանդի և այլոց աշխատությունների լուսաբանման գործին: Նրանց հետաքրքրությունների բուն նյութը, մշակութային այլ խնդիրների հետ մեկտեղ, հիշյալ պատմիչների աշխատություններում առկա բանահյուսական նմուշներն էին, որոնց օգնությամբ աշխատում էին բացահայտել հայ ժողովրդական բանահյուսության բնույթն ու էությունը, նրա առանձին տեսակների ժանրային նկարագիրը և այլ խնդիրներ:

Հիշյալ հեղինակների աշխատությունները, ի դեպ, նյութերի ընդգրկմամբ սահմանափակվում էին հիմնականում հին ու միջնադարյան պատմության շրջանակներում, որի պատճառով էլ առաջադիր խնդիրները համակողմանի լուծում չստացան: Խնդրի առավել համակողմանի բացահայտման համար անհրաժեշտ էր կենդանի, բանավոր ավանդության աղբյուրագիտական հարուստ շտեմարան: Բանահյուսական գրառված նյութի, մասնավոր այն ամփոփող ժողովածուների պակասը խոչընդոտում էր տեսական ու գործնական միասնական կապերի ստեղծմանն ու ամրագրմանը: Հետազոտողները գրեթե անհաղորդ էին ժողովրդի մեջ ապրող բանահյուսական արժեքներին: Հիշյալ ժամանակաշրջանում բանահավաքչությունը իրականացվում էր տարերայնորեն՝ անհատ մարդկանց անձնական նախածեռությամբ, և գրառված նյութերը կամ մնում էին առանձին գրառողների անձնական արխիվներում՝ անհաղորդ հասարակության լայն շերտերին, կամ հրատարակվում էին մանուկ առանձին օրգաններում, որոնց դարձյալ չէին հաղորդակցվում հայ ժողովրդի տարանջատ հատվածները: Զգացվում էր առանձին ժողովածուների հրատարակման անհրաժեշտությունը: Կար գաղափարը, բայց իրագործման ուղիները դեռևս ստակեցված չէին. չկար մշակված համակարգ, չկային նախածեռնող կազմակերպիչներ: Գ. Ախվերդյանի «Սայաթ Նովա» (1852), Ղ. Ալիշանի «Ռամկական երգեց հայոց» (1852), Գամառ-Քաթիպայի «Ազգային երգարան» (1856) ժողովածուները լիարժեք ժողովրդական չէին, քանի որ նրանցում իրար կողքի զետեղվում էին ժողովրդական և ժողովրդական ոճով գրված հեղինակային ստեղծագործություններ: Գամառ-Քաթիպան անգամ երգերի հեղինակների անունները չէր նշում, «կարծես նրանց ավելի քան ազգային, ընդհանուր բնույթ տալու համար»¹: Հաշվի առնելով՝ գործի հրատարակությունն ու անհրաժեշտությունը՝ Միք. Միանսարյանցը, ստեղծագործաբար յուրացնելով իր նախորդների փորձն ու իմացությունը, ձեռնամուխ է լինում «Քնար հայկական»

¹ Ա. Մնացականյան, Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, Երևան, 1956, էջ 14:

(1868) ժողովածուի կազմմանն ու հրատարակմանը: Չնայած ժողովրդական և ժողովրդական ոճով գրված հեղինակային ստեղծագործությունների միջև գոյություն ունեցող տարբերությունների դարձյալ ոչ հստակ պատկերացումներին, նյութի մատուցման ու դասակարգման եղանակներով Մ. Միանսարյանը մի քայլ առաջ անցավ իր նախորդներից՝ ժողովածուին հաղորդելով աղբյուրագիտական, մասնավորապես բանահյուսական ու բանագիտական ուղղվածություն:

Յայ ժողովրդական բանահյուսության ուսումնասիրության հիմնաքարերից՝ Ստ. Պալասանյանի «Երգեր» և Գար. Ջարբհանայանի «Գողթան երգեր» խորագիրը կրող հետազոտությունների գետեղումը ժողովածուի առաջին էջերում, իբրև առաջաբաններ, ինքնին հաստատում է ժողովածուի բանահյուսական բանագիտական ուղղվածության իրողությանը: Կարևորն այստեղ ոչ միայն ժողովածուն կազմողի կողմից խնդրի տեսական ըմբռնումն ու գիտակցումն էր, այլև երգերի վերաբերյալ վերոհիշյալ հետազոտողների գիտապատմական հայացքները ժողովրդականացնելու, բանահավաքչությամբ ու բանագիտական խնդիրներով զբաղվողների մասնագիտական կողմնորոշմանն աջակցելու Միք. Միանսարյանցի գործադրած ջանքերը: Մ. Միանսարյանը, դրանով իսկ, նպաստում է մշակութաբանների միջև տեսական ու գործնական կապերի ստեղծմանը, միաժամանակ ժողովածուի հրատարակությանը հաղորդում նոր բովանդակություն ու իմաստ՝ նոր սկզբնավորվող բանագիտության ընթացքը դիտելով բնագրերի հրատարակության ու հրատարակված նյութերի ուսումնասիրության շրջանակներում: Մ՝ Միանսարյանը ինքնանպատակ չէր տեղադրել վերոհիշյալ հեղինակների աշխատություններն իր ժողովածուում:

Նա ծանոթ է եղել ժամանակի իշխող բանագիտական ուղղություններին ու տեսակետներին, ունեցել է իր որոշակի վերաբերմունքը դրանց նկատմամբ և առաջնորդվել է հատկապես այն գիտնականների տեսական դրույթներով, որոնք աշխատել են բանագիտական խնդիրներին նոր, որակ հաղորդել: Ստ. Պալասանյանի «Պատմություն հայ գրականության» մասին աշխատությանը տրված նրա գնահատանքը վերը նշվածի վկայությունն է. «Շատ պատուական աշխատություն է, արժանի հայագի երիտասարդների իմաստասիրութեան: Յեղիմակը շատ տեղ հետևել է երևելի գիտնական Շերր գիտնականի կլասիկական (առաջնակարգ) աշխատության և հայեցուածքներին և այս կողման էլ արժանի է ազգային գրականությունը յառաջադիմութեան կամեցողների և գնահատողների շնորհակալութեան»²: Միք. Միանսարյանը նյութերի մատուցման յուրօրինակ սկզբունքների կիրառմամբ լայն հեռանկարներ է բացել հրատարակիչների առջև՝ ժողովածուները գիտական որոշակի սկզբունքներով հրատարակելու ուղղությամբ: Այս առումով Մ. Միանսարյանցի ժողովածուն գրեթե չուներ իր նախատիպը: Քնարական ստեղծագործությունների մասին ձեռք բերած տեսական հիմնավոր գիտելիքներն ու իմացությունը նպատակամղում են նրան բնագրերը տեղադրելիս առաջնորդվել թեմատիկ տեղաբաշխման սկզբունքով՝ ելակետ ընդունելով հայկական երգերի բազմաբովանդակ կողմերը. 1. հոգևոր երգեր, 2. օրորոցային երգեր, 3. հասարակաց (ռամկական) երգեր, 4. ազգային, ազգասիրական և զինվորական երգեր, 5. ուսանողաց երգեր, 6. սիրո երգեր, 7. տխուր երգեր, 8. խնջույքի, ուրախության, հարսանյաց և երգիծական երգեր, 9. խառը բանաստեղծությունք: ժողովածուում բնագրագիտական որոշակի սկզբունքների կիրառումը հիմք է տալիս եզրակացնել, որ Մ. Միանսարյանցի նպատակը սոսկ երգարան ստեղծելը չի եղել, այլ բնագրերը՝ իբրև սկզբնաղբյուրային հավաստի վավերագրեր, ծառայեցնել գիտության այլևայլ բնագավառների լուսաբանման խնդիրներին: Գիտակցելով բնագրերին կից օժանդակ տվյալների, տեղեկությունների հաղորդման կարևորությունն ու անհրաժեշտությունը՝ Միք. Միանսարյանը գրում է. «Բնագրերի մեջ դրինք, իբրև ծանոթություն կամ մեկնություն բազում և զանազան մատենագրական, բանագրական, պատմաբանական, աշխարհագրական և կենսագրական տեղեկութիւնք» (էջ Ժ): Նյութի նկատմամբ ունեցած սկզբնաղբյուրային դերի գիտակցումն է մղում Միանսարյանցին բնագրերին կից ներկայացնել նաև հետազոտական բնույթի ծանոթագրություններ: Միջնադարյան ժողովրդական «Լևոնի երգի» տողատակին գրում է. «Յեթում Ա Կիլիկիոյ թագավոր էր Յայոց: 1266 թ. Եգիպտացւոց թագավորաց գորքը անցան Յրեաստանը և հասան

² Մ. Միանսարյանց, Քնար հայկական, Ս.: Պետերբուրգ, 1868, էջ ԺԳ: Այսուհետ այս գրքից մեջբերումների հղումները կտրվեն շարադրանքում:

Կիլիկիա: Զեթուն ուղարկեց յուր երկու որդւոց՝ Լևոնին և Թորոսին: Լևոն և Թորոսը թեպետ շատ քաջութեամբ պատերազմեցին, բայց Թորոսը վիրավորվեցավ և մեռավ, իսկ Լևոնը մատնութեամբ քանի մի հայոց իշխանների թշնամեաց ձեռքը գերի ընկավ և մեկ տարիից հետո ազատվեցավ յուր հոր՝ Զեթունի օգնութեամբ» (էջ 130): «Ողբ Ջուղայեցոց» երգի տողատակ տրված ծանոթագրութիւնը վերաբերում է հայ ժողովրդի պատմական անցյալի, նրա քաղաքական կյանքի մի այլ ժամանակաշրջանում տեղի ունեցած դէպքերի նկարագրությանը. «Երգի նյութն է ողբը հայ Պարսկաստան քշվելուն վրա՝ 1605-ին Պարսից շահ Աբաս թագավորի հրամանավր: Զեղինակն է Զին Ջուղայի Շամբ անունով գեղի մոտ, Նախավկայի վանքի Ստեփան վարդապետը, Ջուղայեցոց Սպահան քշվելու ժամանակակից: Այս երգը առաջին անգամ հրատարակվելու պատճառը և գտնողը Գալուստ Շերմազանեան վարդանյանցն է» (էջ 134): Բնագրի մասին հաղորդված տվյալներն ունեն մշակութային, պատմաճանաչողական կարևոր արժեք: Տվյալներից պարզվում են, որ՝ 1. Երգի ծնունդը մտացածին դէպքերի բանաստեղծական վերապրումի արդյունք չէ, այլ՝ ողբերգական դէպքերին ականատեսի վկայություն, որով և երգը ձեռք է բերում պատմական բնույթ: 2. Նյութի ձեռքբերման ուղիների մասին վերը բերված տվյալների հաղորդմամբ Միանսարյանցը նպաստում է բնագրագիտական որոշակի սկզբունքների ձևավորմանն ու կանոնակարգմանը: Միանսարյանցը, առհասարակ, հետևողականորեն պահպանել է նյութերի ձեռքբերման ուղիների մասին տվյալների հաղորդման սկզբունքը: Եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ Գամառ-Քաթիպան անտեսել է նման տվյալների հաղորդումը իր ժողովածուում, ապա Միանսարյանցի՝ բնագրագիտական նման սկզբունքի կիրառման գիտաճանաչողական, աղբյուրագիտական դերն ու նշանակությունը առավել քան արժեքավորվում է: Քաջածանոթ լինելով ռուսական մշակութային, մասնավորապես ժողովրդագիտության բնագավառում ձեռք բերված նվաճումներին՝ Միանսարյանցը իր գործնական առաջարկներով փորձում է նրանց օրինակը փոխադրել հայ մշակութային կյանքի լայն տեսադաշտ: Վկայակոչելով Մոսկվայում հրատարակված «Детские песни изд. Безсонова с сотрудниками» ժողովածուն՝ Միանսարյանցը Ստ. Պալասանյանի՝ մանկական երգերի մասին գրված հետազոտությանը կից տողատակին նշում է. «Երեխայոց կանոնավոր և ուղիղ դաստիարակութեան համար մեծ նշանակութիւն ունեն երեխայական երգերը: Ցանկալի է, որ բոլոր մեր ազգի մեջ այժմ երգված երեխայական (մանկական) և խաղալիքների երգերը տպվեն առաջ օրագիրների մեջ և հետո՝ առանձին» (էջ 38): Առաջ քաշելով մանկական երգերը առանձին ժողովածուով հրատարակելու անհրաժեշտությունը՝ Միանսարյանցը դրանով նպաստում է ոչ միայն մանկական, այլև՝ առանձին երգատեսակների ու ժանրերի նկատմամբ գիտաճանաչողական վերաբերմունքի ձևավորմանը:

Գիտակցելով բնագրերին կից աշխարհագրական-տեղագրական տվյալների կարևորությունն ու անհրաժեշտությունը՝ Միանսարյանցը Ջարբիհանյանի «Գողթան երգերի» տողատակին ներկայացնում է ոչ միայն Գողթն գավառի մասին պատմաաշխարհագրական տվյալներ, այլև բանագիտական որոշ խնդիրների վերաբերյալ հետազոտական վերլուծությունների փորձեր է կատարում: «Գողթն,- գրում է Միանսարյանցը,- Գողթնաստան, Գողթն Գինվետ նահանգ Զին Զայաստանի, պարունակում է յուր մեջ հետագա ականավոր տեղերը Որդուատ (Որդուպատ), Երասխ (Արագ) գետի վրա, որ այժմ ունե 200-ի չափ հայ գերդաստուն: Ազուլխն ունի 300-ի չափ հայ գերդաստուն: Գողթն պատկանում է մերթ Վասպուրական, մերթ Սյունյաց իշխանութեանց: Ազուլեցվոց կոչում են «զոկ», որը նշանակում է վիպասան (пансод)» (էջ 48):

Չոկ անվան յուրատիպ մեկնաբանությամբ Մ. Միանսարյանցը փորձում է հայ վիպասանության որոշ խնդիրներ գիտավերլուծական քննարկումների առարկա դարձնել: Խնդրի կարևորությունը հետագայում չի նվազել: Տարիներ անց այն Մ. Աբեղյանի կողմից լուսաբանվեց գիտական մի այլ մոտեցմամբ³:

Երգերին կից տրված պատմաաշխարհագրական տվյալների հաղորդումը նպաստում է

³ «Հին առասպելական Դահակ անունը, ինչպես հայտնի է, դարձած է Չոհակ, սրանից է ծագում գոկ: Գողթն գավառի բնակիչների գոկ կոչումն ուրեմն, ոչ այլ ինչ է, բայց եթե հին «գարնք Աժի Դահակայ» կոչման մնացորդը, որ հին դարերից պահվում է մինչև մեր օրերը»: Մ. Աբեղյան, Երկեր, Ա, Երևան, 1966, էջ 135:

բնագրերի կենցաղավարման հետ կապված խնդիրների բացահայտմանը և վկայում, որ 19-րդ դ. 2-րդ կեսին պատմագրտական և մշակութային բազմաթիվ բնագավառներ որոշակիորեն հետաքրքրել են հայ մտավորականներին, որոնք հետազոտական վերլուծություններով փորձում էին ազգային պատմության ու մշակույթի հիմքերը ամրագրել: Ժողովածուում տեղ գտած քազմաթիվ հետազոտական բնույթի վերլուծությունների կողքին գիտապատմական մեծ արժեք է ներկայացնում «Շահրիարցոց երգի» տողատակում նշված ծանոթագրությունը. «Սուրբ Էջմիածնա Վաղարշապատ գյուղից դեպի արևմուտ (հինգ կամ վեց ավուր ճանապարհ երկարությամբ) «Շահրիար» կամ «Շեիրիար», Սարդարաբաղ (Արագածոտն) բերդի հարավային կողմը, գյուղ, ուր կըբնակին մոտ 80 չափի հայ գերդաստուն, ունին եկեղեցի: Շեիրիարի մոտ կան մինչև այժմ մնացվածք հնագույն քաղաքանօր (στολια, capitale) Հայոց Արմավիրինը, Հայկայ թոռն Արամայիսից շինած մոտ 4200 տարի մեզանից առաջ: Երբ որ Երախս գետը յուր ընթացքը փոխեց և հեռացավ Արմավիրից, այս մայրաքաղաքին նշանակությունը, ջրի սակավութեան պատճառով, սկսեց նվազել, բայց տակավին, մինչև 5-րդ դարը, Քրիստոսի ծննդյանից հետո, ականավոր տեղի էր և հայտնի չէ, երբ իսպառ ավերակ դարձավ: Սարդարաբաղու և Շեիրիարի շինությանը Արմավիրի ավերակների քարերից շատ նյութ վաստակեցին: Սարդարաբաղու բերդը շինեց 1819 թվին Երևանու պարսկական փոխարքա Հյուսեին-խան Սարդարը և Ռուսք տիրապետելով հայկական նահանգին, 1828 թուակ. հետո, առավել ևս ամրացուցին բերդը: Այժմ Սարդարաբաղու և Երևանու բերդերը գրեթե ոչինչ նշանակություն չունին և Օսմանյան և Պարսից հետ եթե պատերազմ պատահի, Ռուսաց զլխավոր և կանոնավոր կերպով ամրացուցած, նորահնար թնդանոթներով զինվորված և պատերազմական պաշարով պատրաստություն տեսած բերդն Ալեքսանդրապոլն է (Գյումրի, Գումբրի, Կյումրի, Շիրակ գավառումը, Այրարատյան աշխարհումը» (էջ 178): Սկզբնաղբյուրային կարևորություն են ներկայացնում նաև Մկրտիչ Խրիմյանի հիմնադրած Վարագա հռչակավոր դպրոցի երբեմնի սան Տիգրան Ամիրջանյանի «Պանդուխտ վասպուրականցին իր ընկերին» ստեղծագործությանը կից Միանսարյանցի ներկայացրած Վասպուրականի մասին տեղագրական, պատմաաշխարհագրական փաստացի սեղմ նկարագրությունը. «Վասպուրական ութերորդ նահանգ հին Հայաստանի, կոչվում էր նաև երկիր Արծրունյաց, տերություն կամ թագավորություն Վասպուրականի (հույները վրիպակով կոչում էին Վասպուրական, Ասպրականիա, Վերին Մարք (Մարաց երկիր), Վերին Մեդիա, Վաստօպետա: Վասպուրականը ամենից ընդարձակ նահանգն էր և ուներ 30 գավառ, զոր Ռշտունիք, Բզնունյաց (Վանա) ծովի եզերքը, որ կոչի սև ծով Ռշտունյաց, Թոսպեան լիճ, ծով Տոսպայ: Սոցա եզերքն է Նարեկա վանքը, Տոսք (Շամիրամակերտ, այժմ Վան), մայրաքաղաքն Վան, մոտ 2000 տուն հայ ժողովուրդ: Սորա յարևակողմն ականավոր Վարագ լեռն, ներքին և վերին: Աղթամար, Վանու չորս կողմերից զլխավորը, ուր կա Սուրբ խաչ եկեղեցին, Գագիկ արքայի հրամանով շինած 915-921 թվական, կան նաև զարմանալի հին ավերակներ, մեմաստան, կաթողիկոսարան և այլն» (էջ 181):

Երգի հայրենիքի մասին բերված վերոհիշյալ տվյալները սկզբնաղբյուրային, պատմամշակութային կարևոր արժեք են ներկայացնում երգի կենցաղավարման, նրա գոյատևման հետ առնչվող համընդհանուր հատկանիշների բացահայտման գործում: Մ. Միանսարյանը նյութերի մատուցման յուրատիպ սկզբունքների կիրառմամբ նպաստել է նաև նմանատիպ երգերի տարբերակների խմբավորմանը: Օր. «Որք կաքավու» երգի, «Տփխիսեցուց երեսայական երգի» կողքին գետեղել է նրանց այլ տարբերակները, երբեմն էլ երգի վերնագիր է ընտրել՝ հիմք ընդունելով երգի կենցաղավարման հայրենիքը: Օր. «Շահրիարցոց երգ», «Նոր Նախիջևանի երգ», «Երգ Վանի լեզով» և այլն: Մ. Միանսարյանցի նման մոտեցումը արդյունք է բանահյուսության աշխարհագրականության մասին ժամանակին իշխող այն տեսակետի, ըստ որի յուրաքանչյուր բարբառով հաղորդվող նյութ համարվել է բնիկ տեղային, ծագումնաբանորեն բնորոշ միայն տվյալ տեղավայրին, զուրկ տարածվելու, տեղաշարժվելու բնական ընթացքից: Նման մոտեցումը պատահական չէ. չկար դեռևս գիտական այն պատկերացումը, որ ցանկացած բարբառով կատարվող յուրաքանչյուր բանահյուսական ստեղծագործություն բազմաշերտ սեռատարիքային խմբերի ներսում կարող է ներշարժունակ զարգացման ուղով տարածվել, տեղային գույն ու երանգ ստանալ, գոյատևել ու նպաստել տարբերակների առաջացմանը: Միանսարյանցի կողմից նյութերի աշ-

խարհագրական տեղագրական վերոհիշյալ սկզբունքի կիրառումը նաև այլ նպատակներ է հետապնդել. «... արևելյան, արևմտյան, հյուսիսային և հարավային երգերը թե տեղական բարբառով, թե ամենեցուն հասկանալի լեզվով» ի մի բերելով նպաստել «... զանազան տեղեր ցրվեալ մեր հայրենակիցներուն մտավորապես և բանաստեղծապես իրար ճանաչելուն, միավորվելուն» (էջ ԺԸ):

Մ. Միանսարյանցի ազգային-լուսավորական գաղափարները վերոհիշյալ խնդրում միաձուլվում են նրա հրատարակչական սկզբունքներին՝ դարձնելով այն ելակետային ու հեռանկարային: Երգերի տեղաբաշխման վերոհիշյալ սկզբունքը ոչ միայն խթանիչ է դառնում հայ ժողովրդի համախումբ կեցության գործին, այլև նպաստում է համանման ստեղծագործությունները միավորող աշխարհագրական, տեղագրական, լեզվաբարբառային համընդհանուր և տարբերակիչ գծերի բացահայտման նկատմամբ նորովի պատկերացումների ձևավորմանը, իսկ հետագայում նաև՝ տարբերակների խնդրի՝ առավել ճշգրիտ, գիտական սկզբունքների ու ըմբռնումների լիովին գիտակցմանը: Մ. Միանսարյանցը, հեղինակային ստեղծագործություններին կից ներկայացնելով Ներսես Շնորհալու, Եղիշեի, Քերովբե Տեր-Պատկանյանի, Համբարձում Փափազյանի, Ռափայել Պատկանյանի, Գաբրիել Պատկանյանի, Հարություն Ալամդարյանի, Միքայել Նալբանդյանի, Գևորգ Աստվածատուրյան Դողոխյանցի, աշուղներ՝ Սայաթ-Նովայի, Ազբար-Աղամի, Շիրինի, Զովհաննես Նիրանու, Պետրոս Տեր-Հովսեփյան-Մաղաթյանցի (Սեյեադի) մասին կենսամատենագրական տվյալներ, իրականում նպաստում է նյութը կրողի վերաբերյալ տվյալների հաղորդման անհրաժեշտության հիմքերի ձևավորմանը:

Մ. Միանսարյանցը հայ բանագիտության բնագավառում նշանակալից դեր է կատարել ժողովածուում այբբենական դասակարգմամբ ներկայացնելով նաև 526 առած: «Քնար հայկական» ժողովածուի քնարական եռթյունը պահպանելու նպատակով նա առածները ընդգրկել է գրքի վերջում՝ առանձին, հռոմեական համարակալմամբ: Այն կրում է «Ազգային կամ հայախոս առածք» խորագիրը: Առածների տպագրության դրդապատճառների մասին գրում է. «Այս առածները տպվում են երեք նպատակով. 1) ընթերցափրացը մտավոր զբոսանք պատճառելու համար, 2) առավել հարցախնդիր ուսումնականաց ազգիս այսօրինակ կենդանի աղբյուրներից նյութ հաղորդելով ազգային բարուց և հանճարո վերա բանադատություններ առաջ բերել տալ. 3) առիթ տալ հայ ուսումնասիրաց այս փոքր հավաքածուն ավելցնել այն հայախոս առածներով, որոնց գործ է ածում մեր ցրվեալ ազգը զանազան տեղեր, որ ժամանակով կարելի լինի ի լոյս հանել կանոնավոր, և առանձին տպագրութեան հայախոս ասացվածքների, պատշաճավոր գիտական մեկնութեամբ, ինչպես որ արդեն ունեն այդպիսի տպագրությունք Գերմանացիք և այլն» (էջ 1):

Վերնագրի երկակի անվանումը (ազգային կամ հայախոս) պատահական չի ընտրել Միանսարյանցը: Նա, անշուշտ, տեղյակ է եղել 1860-ական թվականներին, հետևապես Գերմանիայում, բանավոր ստեղծագործությունների ծագման, տարածման և այլ խնդիրների ուղղությամբ տարվող աշխատանքներին: Բանավոր ստեղծագործությունների մոտիվների ու սյուժեների աշխարհագրական-տարածքային խնդիրները դեռևս լիովին բացահայտված չէին: Բնական է, Միանսարյանցը հստակ պատկերացում չէր կարող ունենալ տվյալ ժանրի ազգային կամ միջազգային բնույթի մասին, քանի որ մեծամտիպ բովանդակությամբ առածները շատ տարածված էին տարբեր ժողովուրդների բանավոր ավանդության մեջ, որոնց անկասկած քաջածանոթ էր և Մ. Միանսարյանցը: Վերնագրի ընտրության խնդրում նման զգուշավորությունը հրատարակիչ Միանսարյանցի լրջմիտ վերաբերմունքի ու պատասխանատվության դրսևորման վկայությունն է: Միանսարյանցը, մի այլ վկայությամբ փորձում է մտավորականների գիտական հետազոտությունների ընթացքին նոր ուղղություն ու բովանդակություն հաղորդել՝ գրավոր աղբյուրների հետ մեկտեղ, իբրև սկզբնաղբյուր, վկայակոչելով նաև բանավոր ավանդությունը. «Ազգաց և ժողովրդոց մտաց կարողությունը և բարուց բնավորությունը պարզաբանելու համար հարցասեր գիտնականք, նոցա գրավոր հիշատակներից հետո միշտ իրանց հետաքրքրութեան աղբիւր ճանաչել են նոյն ազգաց և ժողովրդոց բերանացի ավանդությունները, որոնց կարգումը համարվում են և առածները, երգերը, առակները և սրանց մանաները» (էջ 1):

Գիտակցելով «բանավոր աղբյուրի» գոյության իրողությունը, Միանսարյանցը, սակայն, նյութը կրողի դասային պատկանելության մասին պատկերացումներում դեռևս տուրք

եր տալիս ժամանակի իշխող գաղափարախոսությանը՝ նրանց անվանելով «Անգիր և անուսում մասը ժողովրդեան»։ Եւ նույն կերպ է վարվել նաև երգերը դասակարգելիս։ Բազմաբընույթ երգեր նա տեղադրել է «Ռամկական» խորագրի տակ՝ հիշյալ երգերը ռամիկ դասի կողմից ստեղծվելու հանգամանքը շեշտելու, ընդգծելու նպատակով։

Միանասարյանցի կողմից բերված մի այլ վկայությունը, սակայն, հավաստում է, որ բանավոր ստեղծագործությունների որոշակի կողմերի բացահայտման, ծանաչման խնդրում Միանասարյանցը ունեցել է հստակ պատկերացում։ «Անգիր և անուսում մասը, - գրում է Միանասարյանցը, - յուր դատողութեանց վճռողական հիմն և արարմանց իբրև իրավացի կանոն ամեն անգամ կրկնում է յուր պապերից և յուր հայրենակիցներից իրան հասած վճռողական ասածները այնպիսի մեկ վստահութեամբ, որպես թե ամեն մի՛նը մեկ-մեկ ճշմարտություններ լինեին» (էջ 1)։

Բանավոր նյութի՝ սերնդից-սերունդ փոխանցվելու իրողության գիտակցումը Միանասարյանցի կողմից վկայում է, որ բանահյուսության բազմաբովանդակ կողմերի նկատմամբ պատկերացումները քայլ առ քայլ հստակեցվում են։

Իր կատարած գործի արժևորումը Միանասարյանցը թողել է ապագա սերնդին. «Որքան և մինչև որ կեսը կարողացել ենք հասնել մեր գաղափարներին, թողնում ենք գնահատել անաչառ հասկացողներին և ապագային, որովհետև ամենայն գործ յուր պտուղներից և հետևանքներից կիմացվի ու կգնահատվի» (էջ ԺԹ)։ Հետաքրքիր է, որ վեց տարի անց, նույն մտահոգությունն ու հավատն է արտահայտել իր «Գրոց-բրոց» ժողովածուում, նրա պոլսահայ գրչակից Գ. Սրվանձտյանցը։

19-րդ դարի 70-ական թվականներից մինչև մեր օրերը լույս տեսած բազմաքանակ ու բազմաբովանդակ բանահյուսական ժողովածուները այն «անաչառ հասկացողների և ապագայի» գնահատականն է Մ. Միանասարյանցի «Քնար հայկական ժողովածուի», որի արժեքավորմանն է նա թողել երկյուղածությամբ, բայց և մի թաքուն հավատով. «Եթե հուսալի պտուղները ոչ նույն ժամին կերևին, ազնվագույն պտուղները հասանում են կամաց-կամաց»⁴, Միանասարյանցի ջանքերը ունեցան իրենց ազնվագույն պտուղներն ու բարի հետևանքները։

Վերը բերված տվյալները վկայում են, որ Մ. Միանասարյանցի «Քնար հայկական» ժողովածուն, բնագրագիտական որոշակի սկզբունքների կիրառմամբ, համարվում է առաջին փորձերից մեկը, որում առաջ քաշված գիտագործնական բազում դրույթներ նպաստել են 19-րդ դ. 2-րդ կեսի՝ նոր սկզբնավորվող հայ բանագիտության ձևավորման ու զարգացման գործին։

С. А. ВАРДАНЯН - Роль Микаэла Миансарянца в формировании армянской фольклористики. - В деле формирования армянской фольклористики определенные заслуги принадлежат армянскому культурному и общественному деятелю второй половины XIX в. Микаэлу Миансарянцу. Миансарянец стал одним из первых публикаторов образцов устного народного творчества, представленных в сборниках "Лира Армении" (1868 г.). Здесь автор использовал своеобразные научные методы подачи и классификации материала, открыл широкие перспективы перед издателями фольклорных материалов. Прилагая к фольклорным образцам обширные комментарии аналитического характера, Миансарянец тем самым вложил в издаваемые сборники новое содержание, прояснял ход развития фольклористики, прослеживаемый в рамках параллельного издания и изучения фольклорных источников. Выдвинутые М. Миансарянцем многочисленные научно-практические положения способствовали формированию и развитию армянской фольклористики второй половины XIX в.

⁴ «Հյուսիսափայլ», 1861, էջ 210։